



Խնբային երաշխավորություններով ապահովված Միկրո Վարկեր

h/h		Պայմանները	
1.	Վարկերի տրամադրման աշխարհագրությունը	ՀՀ (բացառությամբ Երևան քաղաքի) և ԼՂՀ	
2.	Վարկի թիրախային շուկան	Ա և Բ վարկատեսակ <ul style="list-style-type: none"> իրավաբանական անձինք, 18 տարեկանից բարձր անհատ ձեռնարկատերեր: 	Գ վարկատեսակ <ul style="list-style-type: none"> իրավաբանական անձինք, 18 տարեկանից բարձր անհատ ձեռնարկատերեր Գյուղատնտեսական գործունեություն իրականացնող 18 տարեկանից բարձր ֆիզիկական անձինք:
3.	Վարկի գումարը	60 000 – 1 500 000 ՀՀԴ ըստ գործող սահմանաչափերի ¹ <i>* Խնբային երաշխավորություններով ապահովված միկրո և միկրո էքսպրես վարկերի մնացորդային գումարը չի կարող գերազանցել 2 500 000 ՀՀԴ</i>	
		<ul style="list-style-type: none"> ✓ առաջին անգամ տրամադրվող վարկի առավելագույն գումարը՝ 720 000 ՀՀԴ, ✓ երկրորդ և ավելի անգամ վարկավորվելու դեպքում վարկի գումարը չի կարող գերազանցել 1 500 000 ՀՀ դրամ: 	
4.	Վարկի արժույթը և միանվագ տրամադրումը	<ul style="list-style-type: none"> • ՀՀ դրամ • կանխիկ և անկանխիկ² 	
5.	Վարկի մարման ժամկետը	5, 9, 12, 18 և 24 ամիս <i>Անսվա վերջին տրամադրվող վարկերի համար նշված ժամկետները միջին հաշվարկով կարող են լինել 15 օրով ավելի</i>	
6.	Վարկի տոկոսադրույթը	Ա և Բ վարկատեսակ <ul style="list-style-type: none"> • վարկի մարման ամիսներին՝ 1.1% ամսական, որը հաշվարկվում է տրամադրված վարկի գումարի նկատմամբ, • մեկ անգամյա դադարի շրջանում՝ 2.0% ամսական, որը հաշվարկվում է տրամադրված վարկի գումարի նկատմամբ, • երկու անգամյա դադարի շրջանում՝ 1.6% ամսական, որը հաշվարկվում է տրամադրված վարկի գումարի նկատմամբ: 	Գ վարկատեսակ <ul style="list-style-type: none"> • 24.0% տարեկան Հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ, բացառությամբ ժամկետանց վարկի գումարի առկայության դեպքերի, երբ հաշվարկվում է մարման ժամանակացույցով սահմանված վարկի գումարի ամսական մնացորդի նկատմամբ:

¹ 60.000ՀՀԴ, 63.000 ՀՀԴ, 90.000 ՀՀԴ, 135.000 ՀՀԴ, 180.000 ՀՀԴ, 225.000 ՀՀԴ, 252.000 ՀՀԴ, 315.000 ՀՀԴ, 360.000 ՀՀԴ, 405.000 ՀՀԴ, 450.000 ՀՀԴ, 495.000ՀՀԴ, 540.000 ՀՀԴ, 630.000 ՀՀԴ, 720.000 ՀՀԴ, 810.000 ՀՀԴ, 900.000 ՀՀԴ, 990.000 ՀՀԴ, 1.080.000 ՀՀԴ, 1.170.000 ՀՀԴ, 1.260.000 ՀՀԴ, 1.350.000 ՀՀԴ, 1.500.000 ՀՀԴ

² Իրավաբանական անձանց վարկի գումարը տրամադրվում է բացառապես անկանխիկ եղանակով

7.	Վարկի տրամադրման վճարը	2.0% միանվագ <i>հաշվարկվում է տրամադրվող վարկի գումարի նկատմամբ և գանձվում վարկի տրամադրման պահին</i>		
8.	Վարկի ընթացիկ սպասարկման վճարը	Ա վարկատեսակ • 0.6% ամսական՝ մինչև 500 000 ՀՀԴ գումարով վարկերի համար • 0.4% ամսական՝ 500 000 ՀՀԴ գերազանցող գումարով վարկերի համար	Բ վարկատեսակ • Չկա	Գ վարկատեսակ Չկա
<i>հաշվարկվում է տրամադրված վարկի գումարի նկատմամբ և գանձվում ամսական կտրվածքով</i>				
9.	Վարկի գումարի մարումները և տոկոսագումարի վճարումները ³	Ա և Բ վարկատեսակ <i>Դիֆերենցված տարբերակ</i> ՝ Վարկի հիմնական գումարը մարվում է ամսական հավասարաչափ վճարումներով՝ բացառությամբ դադարի շրջանի ամիսների	Գ վարկատեսակ <i>Անուիտետային տարբերակ</i> ՝ Վարկի հիմնական գումարը և հաշվարկված տոկոսագումարները մարվում են ամսական հավասարաչափ վճարումներով՝ բացառությամբ դադարի շրջանի ամիսների	
<ul style="list-style-type: none"> • Վարկի հիմնական գումարի մարման համար հնարավոր է 3, 6 կամ 9 ամիս դադարի շրջան, այն սահմանվում է մարման ժամկետի սկզբում: • 24 ամիս մարման ժամկետով վարկերի հիմնական գումարի մարման համար 3 և 6 ամիս դադարի շրջանը կարող է սահմանվել յուրաքանչյուր վարկային տարվա⁴ սկզբում: Անկախ վարկի տրամադրման պահից՝ Գ վարկատեսակի համար հնարավոր է 3 ամիս դադարի շրջան վարկի ժամկետի գործողության ընթացքում առկա յուրաքանչյուր դեկտեմբեր, հունվար, փետրվար ամիսների համար: • Տոկոսագումարը վճարվում է յուրաքանչյուր ամիս: • Վարկի վաղաժամկետ մարման օրը ներառող ամսվա համար գանձվում է մինչև վաղաժամկետ մարման օրը հաշվեգրված տոկոսագումարները: 				
10.	Վարկի ապահովվածությունը	<ul style="list-style-type: none"> • խմբային երաշխավորություններ • 1 080 000 ՀՀԴ գերազանցող վարկերի համար կարող է պահանջվել լրացուցիչ երաշխավոր/ներ՝ 		
11.	Տուժանքը	<ul style="list-style-type: none"> • <u>Ժամկետանց գումարների դեպքում</u>՝ 0.13% հաշվարկվում է մարման ժամանակացույցով սահմանված տվյալ ամսվա վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի (ներառյալ վարկի գումար, տոկոսագումար, սպասարկման վճար՝ առկայության դեպքում) նկատմամբ՝ յուրաքանչյուր ուշացած օրացուցային օրվա համար: • Տույժերի հաշվարկը սկսվում է մարման ժամանակացույցով սահմանված յուրաքանչյուր մարման կետանցման օրվանից և դադարում է ժամկետանց պարտավորության ամբողջական մարման օրը: • <u>Վարկի գումարը մասնակի կառն ամբողջությամբ վաղաժամկետ մարելու դեպքում</u>՝ 0.0% <p><i>*Պայմանագրով որոշված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը:</i></p>		

³ Եթե մարման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա մարման օր է համարվում հաջորդ շաբաթվա նույն օրը:

⁴ Վարկային տարի է համարվում վարկի տրամադրմանը հաջորդող յուրաքանչյուր 12 ամիսը:

Զգուշացում

• ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ և ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՆՐԱ ՄԱՍԻՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ:

ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄՆԵՐԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՄ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵՁ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ՄԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ԱՏՈՐԵՎ:

ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՅԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Հոդված 13. Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բանաձևը և բացատրությունները

1. Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR).

A - կրեդիտի գումարը (կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը).

n - կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը.

N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը.

K_n - կրեդիտի մարմանն ուղղված n -րդ վճարի գումարը.

D_n - կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n -րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով.

i - ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները կարգը հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ:

Հոդված 14. Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը

1. Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է կրեդիտավորման պայմանագրի կնքման պահին՝ ենթադրելով, որ կրեդիտավորման պայմանագիրը գործելու է պայմանավորված ժամկետում, և պայմանագրի կողմերը պատշաճ կերպով և պայմանավորված ժամկետներում կատարելու են պայմանագրով ստանձնած պարտավորությունները:
2. Այն դեպքում, երբ կրեդիտավորման պայմանագիրը պարունակում է դրույթներ, որոնք թույլատրում են տոկոսների և (կամ) սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարների քանակի կամ չափի փոփոխություններ կամ տատանումներ, և հնարավոր չէ այդ փոփոխություններին տալ գումարային արտահայտություն, ապա տարեկան փաստացի տոկոսադրույքը պետք է հաշվարկվի՝ ենթադրելով, որ տոկոսները և (կամ) սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախսի մեջ ներառվող այլ վճարները մնալու են կայուն և կիրառվելու են մինչև կրեդիտավորման պայմանագրի գործողության ավարտը:
3. Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկելիս անհրաժեշտության պարագայում գործում են հետևյալ սկզբունքները.
 - 1) կրեդիտավորման պայմանագրով կրեդիտի առավելագույն սահմանաչափը սահմանված չլինելու դեպքում տրամադրված կրեդիտի առավելագույն չափը մեկ միլիոն դրամն է.
 - 2) եթե կրեդիտավորման պայմանագրով նախատեսված է, որ սպառողը կարող է կրեդիտի գումարը ստանալ մաս առ մաս կամ կարող է ընտրել կրեդիտի գումարը ստանալու պահը, ապա համարվում է, որ կրեդիտի գումարը սպառողին փոխանցվել է ամբողջությամբ կրեդիտավորման պայմանագիրը կնքելու պահին.
 - 3) կրեդիտավորման պայմանագրով կրեդիտի վերադարձման ժամանակացույց կամ կրեդիտավորման պայմանագրի դրույթներով վերադարձման ժամկետներ և միջոցներ սահմանված չլինելու դեպքում կրեդիտի վերադարձման ժամկետը մեկ տարի է.
 - 4) այն դեպքում, երբ կրեդիտավորման պայմանագիրը սահմանում է կրեդիտի վերադարձման մեկից ավելի ժամկետներ, ապա կրեդիտի վերադարձը կատարվում է կրեդիտավորման պայմանագրով սահմանված ամենամոտ ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ կրեդիտավորման պայմանագրով:
4. Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է սահմանել սույն օրենքի 13-րդ հոդվածով սահմանված բանաձևի և տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բացատրություններ և օրինակներ: